ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, գործավարություն, հեռ. 596-125

№ 27/29 «11» 01 2024 թ.

Լինարե ՍՊԸ (ՀՎՀՀ 09212215)
Հասցե՝ Երևան, Նանսենի 7/43, Հեռ.՝ +37493553635
էլ. հասցե՝ linare50@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և Լինարե ՍՊ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև 22.03.2023 թվականին կնքված ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2023-ԲՎ/ԴԵՂ/Ա-31-1 ծածկագրով դեղորայքի ձեռքբերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Լինարե ՍՊ ընկերությունը չի կատարել ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ վերոգրյալ պայմանագրի շրջանակներում Վաճառողի կողմից չի մատակարարվել 7-րդ չափաբաժնով 33691176/7 ԳՄԱ կոդով TGPIIIS /Եռգլիցերիդների որոշման թեսթ-հավաքածու/ չափաբաժնի մեկ տուփ, որը կազմում է 10 800 դրամ:

Համաձայն Պայմանագրի 2.1-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողը էականորեն խախտել է պայմանագով սահմանված պարտավորությունները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը մասնակի

միակողմանի լուծում է ՀՀ ներքին գործերի նախարարության և Լինարե ՍՊ ընկերության միջև 22.03.2023 թվականին կնքված ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2023-ԲՎ/ԴԵՂ/Ա-31-1 ծածկագրով պայմանագիրը:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Լինարե ՍՊ ընկերությանը առաջարկվում է սույն ծանուցումը հրապարակվելուց հետո 5 /հինգ/ օրացուցային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության N 900005028106 հաշվեհամարին փոխանցել Պայմանագրի 6.3 կետերով նախատեսված տուգանք՝ 54 /հիսունչորս/ ՀՀ դրամ, պայմանագրի 6.2 կետերով նախատեսված տույժ՝ 27 /քսանյոթ/ ՀՀ դրամ, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցել պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված պայմանագրի ապահովում՝ 1 080 /հազար ութսուն/ ՀՀ դրամ և որակավորման ապահովում՝ 1 620 /հազար վեց հարյուր քսան/ ՀՀ դրամ, հակառակ դեպքում գումարները կգանձվեն դատական կարգով:

Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել ՀՀ ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժին /ք. Երևան, Նալբանդյան 130/:

Լինարե ՍՊ ընկերության կողմից նշված գանձման ենթակա գումարները չվճարվելու դեպքում ընկերությունը կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

Գնումների համակարգման բաժին
Կատարող՝ Ա. Սարգսյան
Հեռ.՝ 010-59-61-52